



COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME
EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

ՈՐՈՇՈՒՄ

ՍՈՒՐԱԴ ԲՈՋՈՒՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Թիվ. 23693/03 ԳԱՆԳԱՏԻ

ՄԱՍՆԱԿԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ¹

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Երրորդ բաժանմունք) 2005 թվականի հոկտեմբերի 6-ին գումարելով նիստ որպես Պալատ Դատավորների հետևյալ կազմով.

Պրն. Բ.Ս. Ջուպանչիչ (Նախագահ),

Պրն. Ջ. Հեդիգան,

Պրն. Լ. Քաֆլիչը,

Պրն. Ս. Բիրսանը,

Տիկին Ա. Գյուլունյանը,

Օրդ. Ռ. Ջազերը,

Պրն. Է. Մայերը և

Բաժանմունքի ռեգիստր Պրն. Վ. Բերգերը

քննելով 2003 թվականի հուլիսի 17-ին ներկայացված հիշյալ գանգատը.

Խորհրդակցությունների արդյունքում կայացրեց հետևյալ որոշումը.

ՓԱՍՏԵՐԸ

¹ Սույն որոշման թարգմանությունը ոչ պաշտոնական է և կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության ռեսուրսներով:

Թարգմանությունն ու մասնագիտական խմբագրությունը՝ «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության նախագահ Նարինե Գասպարյանի:

© 2005 «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպություն: Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

Դիմումատուն, պարոն Սուրադ Բոջոյանը ազգությամբ հայ է, ծնվել է 1950 թվականին և ներկայումս կրում է իր պատիժը Երևանի «Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում: Նրա ներկայացուցիչներն են Երևանում աշխատող փաստաբաններ Պրն. Հ. Արսենյանը և Պրն. Ա. Ղազարյանը:

Ա. Գործի հանգամանքները

Գործում առկա փաստերը, որոնք ներկայացվել են Դիմումատուի կողմից հետևյալն են.

1. Գործի փաստերի նկարագիրը

Դիմումատուն ծնվել է 1950 թվականին, Ստամբուլում, Թուրքիա: Նա ազգությամբ հայ է:

1963 թվականին իր ընտանիքի հետ մեկտեղ հայրենադարձվել է Հայաստան: 1972 թվականին նա ավարտել է Երևանի պետական համալսարանը՝ պատմաբանի և արևելագետի որակավորմամբ: 1972-ից 1991 թվականներին դիմումատուն աշխատել է Գիտությունների ակադեմիայում որպես պատմաբան և արևելագետ: 1980-ից 1991 թվականներին նա միաժամանակ աշխատել է հանրային ռադիոյում որպես հաղորդավար և թուրքերենի թարգմանիչ:

Միևնույն ժամանակ, 1970-ից 1991 թվականներին դիմումատուն աշխատել է Միջկովկասյան ռազմական հետախուզական ծառայությունում (Տրանսկովկասյան զորամիավորման հատուկ ծառայության գործակալ) և ունեցել է »Զինդե« պայամանական անվանումը: Նա ունեցել է ավագ ռադիո- օպերատորի կոչում և իր հիմնական պարտականությունները ներառել է պատերազմական իրավիճակների ժամանակ Թուրքիայի տարածում համապատասխան միջոցառումներ իրականացնելը:

1991-ից 1993 թվականներին Դիմումատուն աշխատել է Արտաքին Գործերի նախարարությունում որպես Թուրքիայի հետ կապերի բաժնի պետ: 1991 թվականին նաև միաժամանակ աշխատել է Հայաստանի գերագույն խորհրդի արտաքին կապերի հանձնաժողովում որպես գլխավոր փորձագետ:

1996 թվականին դիմումատուն Նախագահի աշխատակազմում նշանակվել է որպես թուրքերենի թարգմանիչ և Թուրքիայի գծով գլխավոր մասնագետ, որտեղ էլ աշխատել է մինչև 1998 թվականը, երբ աշխատանքից ազատվել է հաստիքների կրճատման հետևանքով:

1993 թվականից սկսած դիմումատուն վերլուծական հոդվածներ էր գրում մի շարք Հայկական («Ազգ», «Հայաստանի Հանրապետություն», «Երկրապահ», և «Հայք») և Թուրքական («Ռադիկալ») թերթերի համար: Նա պայմանագրային հիմունքներով աշխատում էր նաև թուրքական այլ լրատվական միջոցների հետ՝ 1998 թվականից՝ Անատոլիայի լրատվական գործակալության (*Anadolu Ajansi*), և 1999 թվականից՝ NTV TV կայանի և MSNBC վեբ-կայքի հետ: Դիմումատուն համագործակցում էր նաև BBC-ի հետ: Բացի դրանից, նա, որպես թարգմանիչ, պարբերաբար ուղեկցում էր թուրք լրագրողներին նրանց Հայաստան կատարած այցելություններում:

Դիմումատուն պնդում է, որ 2000 թվականի ամռանից, զբաղվել է առևտրով, միայնակ կամ իր կնոջ հետ պարբերաբար մեկնելով Թուրքիա՝ հագուստ վաճառելու կամ գնելու նպատակով:

2. Դիմումատուի նկատմամբ իրականացված քրեական վարույթները

ա. Դիմումատուի ձերբակալումը և ինքախոստովանությունը

2002 թվականի հունվարի 25-ին դիմումատուի նկատմամբ քրեական վարույթ հարուցվեց, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի իրավիճակի, կազմակերպությունների և մարդկանց վերաբերյալ տեղեկատվություն հավաքելու և թուրքական գաղտնի ծառայություններին փոխանցելու կասկածանքով:

2002 թվականի հունվարի 26-ին, մոտավորապես երեկոյան ժամը 8-ին, Թուրքիա մեկնելիս դիմումատուն և նրա կինը ձերբակալվել են հայ-վրացական սահմանի վրա և պահվել մաքսային մարմնում՝ տարբեր սենյակներում: Դրանից հետո նրանք ենթարկվել են անձնական զննության և նստեցվել ոստիկանական մեքենա, որտեղ էլ մնացել են մինչև վաղ առավոտ:

2002 թվականի հունվարի 27-ի առավոտյան մոտավորապես ժամը 5-ին, ոստիկանական մեքենան շարժվեց Երևան: Երևան հասնելուն պես, մոտավորապես առավոտյան ժամը 8-9-ին, դիմումատուն և նրա կինը տարվել են ՀՀ ազգային անվտանգության նախարարություն, որտեղ պահվել են առանձին սենյակներում:

Նույն օրը ժամը 13-անց 15-ից մինչև 17-ը դիմումատուն հարցաքննվել է որպես կասկածյալ: Ըստ նրա, քննիչները հոգեբանական ճնշման և շանտաժի միջոցով ստիպում էին նրան խոստովանել: Մասնավորապես նրանք սպառնում էին, որ եթե ինքը հրաժարվի խոստովանելուց նրա կինը և էպիլեպտիկ տղան

ԲՈԶՈՒՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ
Ոչ պաշտոնական թարգանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից

կկալանավորվեն: Նա նշում էր, որ նման պայմաններում ինքն այլ ընտրություն չունեի քան խոստովանելը: Այդ պատճառով, իրադրությունը հարթելու, իր կնոջը կալանքից ազատելու և քննիչներին ապակողմնորոշելու արդյունքում որոշակի ժամանակ շահելու նպատակով, նա որոշեց կատարել կեղծ խոստովանություն, հորինելով պատմություն, որում բերվում էին հորինված անուններ, վայրեր և ծպտյալ բնակարաններ, որոնք երբևէ գոյություն չեն ունեցել: Որպես իր պատմության հիմք նա օգտագործել է որոշ իրական մարդկանց և հանգամանքներ՝ Թուրքիա պարբերաբար կատարած իր ուղևորություններից:

Հարցաքննության ընթացքում փաստաբան ներկա չի եղել: Ղիմումատուն պնդում է, որ ազգային անվտանգության աշխատակիցները մոլորեցրել են իրեն փաստաբան տրամադրելու հարցում: Նրանք համոզել են իրեն, որ փաստաբանի ներկայությունը օգտակար չի լինի, ընդհակառակը կվնասի, որ ոչ մի փաստաբան չի վերցնի իր գործը, եթե նույնիսկ վերցնի կպահանջի մեծ գումար: Պարզելով, որ նախկինում ինքը ծառայել է հատուկ ծառայություններում, նրանք ասացին, որ նրա ձերբակալումը պետք է որ թյուրիմացություն լինի և նա շուտով ազատ կարձակվի, հետևաբար փաստաբանի անհրաժեշտություն չկա: Իր հետագա պնդումներում, Ղիմումատուն նշում էր, Ղիմումատուն նշում էր, որ քննիչները հրավիրել են պետության կողմից նշանակված փաստաբան, բայց ինքը հրաժարվել է նրա ծառայություններից, քանի որ ինքը չի ցանկացել գործ ունենալ պետության կողմից նշանակված կամ մասնավոր փաստաբանի հետ, քանի դեռ չի ապահովել իր ընտանիքի անվտանգությունը: Գործի հանգամանքներից երևում է, որ Ղիմումատուի կինը, ով նույնպես հարցաքննվել էր բայց մերժել էր խոստովանել, ազատ էր արձակվել նույն օրը կեսօրին:

2002 թվականի հունվարի 28-ին Ղիմումատուին պաշտոնապես մեղադրանք ներկայացվեց 07.03.1961 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածով՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության սուվերենության, տերիտորիալ անձեռնմխելիության կամ պետական անվտանգության և պաշտպանունակության, լրտեսություն կատարելու մեջ: Նա մասնավորապես մեղադրվում էր Թուրքիայի ազգային հետախուզական կազմակերպության (Միլլի Իսթիհքարաթ Թեսքիլաթի (ՄԻԹ)) հետ համագործակցելու, համապատասխան վճարումների դիմաց՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ռազմական, տնտեսական և քաղաքական ոլորտներին, հատկապես Հայաստանում տեղակայված ռուսական զորամիավորումների

մասին 2000թ-ի հունիսից մինչև 2002թ-ի հունվարն ընկած ժամանակահատվածում տեղեկություններ տրամադրելու մեջ:

Նույն օրը դիմումատուն դատարանի որոշմամբ կալանքի ենթարկվեց: 18.15-ից մինչև 22.40-ն դիմումատուն կրկին հարցաքննվեց վերը թվարկված մեղադրանքների առնչությամբ: Նա նշեց, որ փաստաբան ունենալ չի ցանկանում: Հետագայում նա ընդունել է իր մեղքը և զղջացել է իր կատարած արարքների համար:

Ընդհանուր առմամբ 2002 թվականի հունվարի 27-ին և 28-ին դիմումատուի տված ինքնախոստովանական ցուցմունքները պարունակում էին հետևյալը: Դիմումատուն տարբեր թուրք լրագրողների հետ իր առաջին կապը ստեղծել է Արտաքին գործերի նախարարությունում աշխատելու ընթացքում, որպես հասարակական շփումների գործառույթի մաս: Այս կապերից մի մասը հետագայում վերածվեցին մասնագիտական համագործակցության, ինչպիսին են լրագրողական նյութերի պատրաստումը NTV TV-ի և Անատոլիայի լրատվական գործակալության համար: 2000 թվականի հունիսին, դիմումատուն ՄԻԹ-ի աշխատակիցների համար, որոնց նա հանդիպել էր 2000 թվականի մայիսին Թուրքիա կատարած իր ուղևորության ժամանակ, սկսեց պատրաստել Հայաստանի քաղաքական և տնտեսական ոլորտներին վերաբերող վերլուծական նյութեր: Հետագայում փոխանցվող նյութերը պարունակում էին նաև ռազմական բնույթի տեղեկություններ: Վիճարկվող նյութերը հավաքելու համար դիմումատուն օգտագործել է հայկական մամուլը և սեփական գիտելիքները: Տեղեկատվությունը փոխանցվել է գրավոր զեկույցների կամ ՄԻԹ-ի աշխատակիցներին հետաքրքրող հարցերին դիմումատուի՝ [ներանց հետ] անմիջական գրույցի և անձամբ տված պատասխանների միջոցով:

բ. Հետագա զարգացումները և Դիմումատուի ինքնախոստովանական ցուցմունքներից հրաժարվելը

2002 թվականի հունվարի 31-ին դիմումատուի կինը վարձեց փաստաբան Բ-ին, որը գործն ընդունեց 2002 թվականի փետրվարի 1-ին:

2002 թվականի փետրվարի 5-ին և 12-ին դիմումատուն կրկին հարցաքննվեց Բ-ի ներկայությամբ, որի ընթացքում դիմումատուն կատարեց մի շարք հայտարարություններ և նրա նախկինում կատարած մի շաք հայտարարությունների հետ կապված որոշ հարցեր հստակեցվեցին:

2002 թվականի մարտի 21-ին, դիմումատուի կինը բողոքեց հետաքննության մարմնին, որ Բ-ն արդյունավետ իրավաբանական օգնություն չի իրականացնում և մոլորեցնում է ավելի շատ փող ստանալու համար: Նա խնդրում էր, որ դիմումատուին տեղյակ պահեն այս մասին, որ Բ-ին թույլ չտրվի մասնակցել գործին:

2002 թվականի ապրիլի կեսերին, դիմումատուն հրաժարվեց Բ-ի ծառայություններից և վարձեց այլ պաշտպան:

2002 թվականի հուլիսի 4-ին դիմումատուն նախկինում իր կատարած ինքնախոստովանական ցուցմունքները հերքող գրավոր հայտարարություն արեց: Իր հայտարարությունում նա ներկայացրեց դեպքերի իրական ընթացքը, որոնք նկարագրում էին թե 2000 թվականից սկսած ինքն ինչպես է սկսել վերլուծական հոդվածներ պատրաստել MSNBC վեբ-կայքի համար և ինչպես է կամաց-կամաց սկսել զբաղվել առևտրով՝ այդպիսով առավել հաճախակի ուղևորվելով Թուրքիա: Նա նշեց տարբեր մարդկանց անուններ, նրանց նշանակությունը և ուղևորությունների ընթացքում նրանց հետ ունեցած քննարկումները: Դիմումատուն նշեց, որ ինքը երբեք չի համագործակցել օտարերկրյա որևէ այլ կազմակերպության հետ, բացի զանգվածային լրատվության միջոցներից: Ինչ վերաբերում է նախկինում տված իր ինքնախոստովանական հայտարարություններին, ապա դրանք տակտիկական քայլ էին որ նպատակ ունեին ազատել իր կնոջը կալանքից, ապահովել իր ընտանիքի անվտանգությունը և իր նկատմամբ հնարավոր բռնությունները:

2002թ-ի օգոստոսի 16-ին դիմումատուին ներկայացված մեղադրանքները փոփոխվեցին և մասնավորեցվեցին և *inter alia* պարունակում էին հետևյալը. նա 1998 թվականից ի վեր համագործակցել է ՄԻԹ-ի տարբեր գործակալների հետ, ովքեր հիմնականում գործում էին լրագրողական գործունեության ծածկի տակ: Սկզբում տեղեկատվության փոխանցման համար օգտագործվել են հեռահաղորդակցության տարբեր միջոցներ, ինչպես օրինակ՝ նամակներ, ֆաքսեր և հեռախոսազանգեր, սակայն 2000 թվականից սկսված դիմումատուն անմիջական կապ է հաստատել ՄԻԹ-ի Ստամբուլի գրասենյակի գործակալների հետ:

գ. Դատական վարույթները

2002 թվականի դեկտեմբերի 16-ին *Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին աստիճանի դատարանը* դիմումատուին մեղավոր ճանաչեց Քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ և նրան

ԲՈԶՈՒՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ
Ոչ պաշտոնական թարգանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից

դատապարտեց տաս տարի ազատազրկման, ամբողջ գույքի բռնագրավմամբ: Դատարանը գտավ, որ.

«ԽՍՀՄ փլուզումից հետո [դիմումատուն] Հայաստանի Հանրապետությունում զբաղեցնելով տարբեր պատասխանատու պաշտոններ և գերազանց տիրապետելով հայերեն, ռուսերեն և թուրքերին լեզուներին հայտնվել էր ՄԻԹ-ի տեսադաշտում ... Այս ընթացքում [դիմումատուն] պարբերաբար հանդիպել, թարգմանություն կատարելու կամ տեղեկություններ տրամադրելու եղանակով կապի մեջ է գտնվել տարբեր լրագրողների, այդ թվում [Օ.Ռ.Օ-ի, Ն.Հ.-ի, Զ.Բ.-ի, Մ.Ա..Բ.-ի և Ա.Թ.-ի] հետ: Համաձայն Ռուսաստանի Ղաշնության անվտանգության դաշնային ծառայության [(FSB)] և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության նախարարության [(ԱԱՆ)] կողմից ներկայացված տվյալների, այդ անձինք ուղղակիորեն կապված են եղել թուրքական հատուկ ծառայությունների հետ...»:

Դատարանը մանրամասն անդրադարձել է թվարկված անձանց ունեցած կարգավիճակին և Թուրքական հատուկ ծառայություններում նրանց ենթադրյալ մասնակցությանը: Դատարանը նաև գտնում է, որ.

«Գտնվելով նյութական ծանր վիճակում և չկարողանալով վերադարձնել ունեցած պարտքերը, [դիմումատուն] 2000 թվականի գարնանը մեկնել է Ստամբուլ՝ բարձր վարձատրվող աշխատանք փնտրելու նպատակով: Այնտեղ բնակվել է իր մորաքրոջ որդու [Ի-ի] տանը ...: 2000 թվականի հունիսի 2-ին [Ի-ին] [դիմումատուին] ծանոթացրեց ՄԻԹ-ի երկու աշխատակիցների [Թ-ի և Ն-ի] հետ: Նրանք [դիմումատուին] հայտնեցին, որ իրենց տեղեկություններ են հարկավոր «ԱՍԱԼԱ»-ի [(Armenian Secret Army for the Liberation of Armenia)], Քրդական բանվորական կուսակցության, ՀՅԴ-ի [(Հայ հեղափոխական դաշնակցական կուսակցություն)], Հայաստանի Հանրապետության ներքաղաքական դրության, արտաքին քաղաքականության, տնտեսական կապերի, Հայաստանում տեղակայված ռուսական զորքերի մասին: [Դիմումատուն] նրանց տեղեկացրել է, որ ցանկանում է 5,000-7,000 ԱՄՆ դոլար ստանալ իր ծառայությունների համար: [Թ-ն և Ն-ն] խոստացել են վարձատրության հարցը համաձայնեցնել իրենց ղեկավարության հետ: 2000 թվականի հունիսի 6-ին կրկին հանդիպելով ՄԻԹ-ի վերոհիշյալ աշխատակիցների հետ, [դիմումատուն] խնդրել է նախ օգնել մարելու իր պարտքերը, որից հետո ինքը կհամագործակցի: Երրորդ հանդիպման ընթացքում, 2000 թվականի հունիսի 8-ին ... ՄԻԹ-ի գործակալից [Թ]-ից [դիմումատուն] ստացել է 500 ԱՄՆ դոլար կանխավճար, խոստանալով երկու ամիս անց նրանց հանձնել իրենց պահանջած տեղեկատվությունը: Հունիսի 9-ին, վերադառնալով Երևան՝ [դիմումատուն] սկսել է մամուլում եղած հրապարակումներից առանձնացնել թուրքական ազգային հետախուզության աշխատակիցներին հետաքրքրող տեղեկությունները, հետագայում նրանց հանձնելու նպատակով:

2000 սեպտեմբերի 6-ի [դիմումատուն] մեկնել է Ստամբուլ, և 2000 թվականի սեպտեմբերի 11-ին այդ տեղեկատվությունը հանձնել ... ՄԻԹ-ի գործակալներին: [Նա նաև] պատասխանել է նրանց հետաքրքրող հարցերին

ԲՈԶՈՒՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ
Ոչ պաշտոնական թարգանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից

Հայաստանի ներքաղաքական կյանքի, Հայաստանում գործող կուսակցությունների, այդ կուսակցությունների անդամների հետ ունեցած ծանոթությունների, Հայաստանի քուրդ մտավորականության միության գործունեության և գտնվելու վայրի մասին, և որպես կատարած հանձնարարությունների դիմաց վարձատրություն ստացել է 1,000 ԱՄՆ դոլար ...:

[2001 թվականի հունվարի 10-ին դիմումատուն] ... ծպտյալ բնակարանում հանդիպել է ՄԻԹ-ի աշխատակիցներին [Թ-ին և Ն-ին], որոնք դժգոհել են միայն մամուլի հրապարակումները ներկայացնելուց, նրանից պահանջելով օգտվել ունեցած ծանոթություններից և իրենց տրամադրել Հայաստանի քաղաքական և տնտեսական կյանքի մասին չհրապարակված գաղտնի տվյալներ: [Դիմումատուն] պարզաբանել է, որ չնայած ունի լայն ծանոթություններ փակ տեղեկատվության հետ շփվող անձանց հետ, սակայն նրանք թույլ չեն տա և ինքն էլ չի կարող գաղտնի տեղեկություններ կորզել: Այնուհետև նա պատմել է Հայաստանում ծավալվող վերջին քաղաքական իրադարձությունների, Հայաստանում լույս տեսնող թերթերի ու խմբագիրների մասին ... Հաջորդ օրը [դիմումատուին] ներկայացրել են ՄԻԹ-ի մեկ այլ գործակալի, ով ներկայացել էր որպես [Գ.] ... [Գ-ն] հանդիմանել է [դիմումատուին] չորս ամիս ընդմիջումով տեղեկություններ տրամադրելու համար, բացատրել է որ առանց գաղտնի կամ ռազմական բնույթի տեղեկություններ տրամադրելու մեծ գումարների վճարման հարցը քննարկվել չի կարող ... [2001 թվականի հունվարի 10-ին Թ-ն] հանդիպման ժամանակ պահանջել է [դիմումատուից] տեղեկություններ ներկայացնելիս այսուհետ պարտադիր կերպով նշել սկզբնաղբյուրը: 2001 թվականի հունվարի 12-ին [դիմումատուն] ... հանդիպեց [Թ-ի և Ն-ի] հետ և [Թ-ից] ստացավ 1,000 ԱՄՆ դոլար իր հայտնած տեղեկությունների դիմաց: [Ն-ն] խորհուրդ տվեց [դիմումատուին] զբաղվել ճամպուրկային առևտրով՝ հաճախակի Թուրքիա մեկնելը այդ կերպ պատճառաբանելու համար ...:

2001 թվականի ապրիլի 16-ին, Ստամբուլում [դիմումատուն] հանդիպել է [Ն-ի և Թ-ին փոխարինող մեկ այլ աշխատակցի հետ] և նրանց տեղեկություններ հաղորդել Վրաստանի, ՌԴ Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերի հայկական համայնքների մասին: Որից հետո [դիմումատուն] ներկայացրել է ռազմական բնույթի տեղեկություններ պարունակող իր գրառումները, որտեղ նշված են եղել սահմանապահների կողմից պահպանվելու, ռուս սահմանապահների հրամանատարի, հայ-թուրքական սահմանի երեք տեղամասերի, հայ-իրանական սահմանի մեկ տեղամասի, «Զվարթնոց» օդանավակայանում գործող սահմանապահ ծառայության առկայության, հայ-թուրքական և հայ-իրանական սահմանների երկարության, Հայաստանի պաշտպանության նախարարության բարձրաստիճան աշխատակիցների, հայկական բանակի ու զորակոչի թվաքանակի, Երևանի կամուրջների, Երևանում առկա զորամիավորումների մասին և նման բնույթի այլ տեղեկություններ: Ծպտյալ բնակարանում տեղի ունեցած հերթական հանդիպումներից մեկի ընթացքում [դիմումատուին] հարցեր են առաջադրվել Հայաստանում առկա ռուսական զենքերի և տեխնիկայի մասին: Ռազմական բնագավառի հարցերի զգալի մասը կրել են նեղ մասնագիտական բնույթ, տեխնիկական միջոցների անունները ներկայացվել են լատինատառ և թվային գրառումներով: [Դիմումատուն] նկարել է Երևանի զխավոր հատակագիծը`

ԲՈԶՈՒՅԱՆՆ ԸՆԴՐԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ
Ոչ պաշտոնական թարգանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից

նշելով քաղաքում գտնվող ռազմական օբյեկտները, կամուրջները և տվել այլ տեղեկություններ: Որպես իր ծառայությունների վարձ՝ [դիմումատուն] ՄԻԹ-ի աշխատակիցներից ստացել է 2,250 ԱՄՆ դոլար և վերադարձել Հայաստան:

Շարունակելով իր համագործակցությունը Թուրքիայի ազգային հետախուզական կազմակերպության հետ և կատարելով նրա աշխատակիցների առաջադրանքները՝ [դիմումատուն] մինչև 2002 թվականի հունվարի 26-ն ընկած ժամանակահատվածում Ստամբուլ է մեկնել նաև 2001 թվականի հուլիսին և հոկտեմբերին, յուրքանչյուր անգամ ՄԻԹ-ի աշխատակիցներին հաղորդելով Հայաստանի վերաբերյալ նրանց հետաքրքրող տեղեկությունները և որպես վարձատրություն ստանալով 2,250 USD ԱՄՆ դոլար: 2001 թվականի հուլիսին [դիմումատուն] ստանալով առաջադրանք, կապույտ մեկ տողանի թղթի թերթիկի վրա գրել է այն հարցերը, որոնց վերաբերյալ տեղեկությունները հետաքրքրում են ՄԻԹ-ին, որոնցից են Հունաստանի հետ ռազմական համագործակցության ընդգրկման, Ռուսաստանի կողմից Հայաստանին տրամադրված նոր զենքերի, նրանց տեղակայման, քանակի, հակաօդային պաշտպանության համակարգի, Քրդական բանվորական կուսակցության, Իրանի և այլ հարցերի մասին:

Իր վերջին Ստամբուլ կատարած այցելության ժամանակ ... 2002 թվականի հունվարի 26-ին [դիմումատուն] կալանավորվել է և նա մոտ հայտնաբերվել են ՄԻԹ-ին փոխանցելու համար իր կողմից կազմված տարբեր փաստաթղթեր ու գրառումներ, որտեղ կան նաև վերը նշված նախկինում թուրքական հետախուզության աշխատակիցներից ստացած հանձնարարությունների պատասխանները: Այս տեղեկությունները [դիմումատուն] հավաքել էր տարբեր աղբյուրներից, տեղեկություններում առկա էին տվյալներ Իրանի կողմից Հայաստանին ցույց տրվող օգնության, Հայաստանի պետական բյուջեից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացվող վարկի, Հայաստանի բանակում տեղի ունեցող ապօրինությունների, Հայկական սահմանապահ զորամասերի տեղակայման, Ռուսաստանից Հայաստանին որպես ռազմական օգնություն տրամադրված ռազմամթերքի և տեխնիկայի, Ռուսաստանի կողմից օգտագործվող ռազմական տեղակայանների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ականների և արկերի ոչնչացման համար հանրապետություն ժամանած անգլիացիների խմբերի, Հունաստանի կողմից Հայաստանին տրամադրված օգնության, Հայաստանում տեղակայված Ռուսական զորքերի համալրման, Հայաստանում գտնվող Քուրդիստան կոմիտեի ներկայացուցիչների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ռազմական, քաղաքական և տնտեսական ոլորտի այլ տեղեկությունների մասին: [Դիմումատուի] մոտ հայտնաբերվել է նաև Հայաստանի քարտեզը, ձայներիզ, որտեղ ձայնագրվել է Հայ-քրդական բարեկամության Երևանյան գրասենյակում [դիմումատուի] և քրդերի միջև կայացած զրույցը, որը [դիմումատուն] պատրաստվում էր ներկայացնել ՄԻԹ-ի աշխատակիցներին, որպես քրդական բանվորական կուսակցության անդամների հետ իր փաստացի կապի առկայության մասին ապացույց»:

Դատարանը որպես իր եզրահանգումների հիմնավորում նախ հղում էր կատարում հետաքննության ընթացքում դիմումատուի տված ինքնախոստովանական ցուցմունքին: Դատարանն այնուհետև հղում էր կատարում հինգ վկաների ցուցմունքներին:

ԲՈԶՈՒՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ
Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից

վկաներից մեկը, ով դիմումատուի հետ հատուկ ծառայություններում աշխատել էր մինչև 1981 թվականը, բնութագրում էր նրան որպես լավ պատրաստված հետախույզ, իսկ չորս այլ վկաները նշում էին, որ նրանք հանդիպել են դիմումատուին Հայ-քրդական բարեկամության Երևանյան գրասենյակում և ճանաչել են որպես թարգմանչի: Որպես իրեղեն ապացույցներ դատարանը բերում էր վերը նշված ձայնագրությունը, Հայաստանի քարտեզը, կապույտ մեկ տողանի թղթի թերթիկը և դիմումատուի մոտ գտնված այլ նշումները:

Ինչ վերաբերում է վերոհիշյալ ինքնախոստովանական ցուցմունքին, ապա պարզ է դառնում, որ դիմումատուն առանց հաջողության փորձում էր ժխտել դա դատարանում: Նա նշում էր, որ ինքը դիտավորյալ էր տվել ինքնագրապարտչական ցուցմունքներ, որպեսզի իր կնոջը ազատի կալանքից, որոշ ժամանակ շահի, որպեսզի Հայաստանի և Ռուսաստանի հատուկ ծառայությունները կարողանան միջամտել և ժխտել մեղադրանքները, և որպեսզի կանխի իր նկատմամբ հնարավոր բռնությունները: Նա նաև նշում էր, որ իր հարցաքննությունից առաջ հրաժարվել էր պետության կողմից նշանակված փաստաբանի ծառայություններից, քանի որ չէր ցանկանում որպեսզի իր գործը հրապարակայնություն ստանա:

[Գանգատում] չհիշատակված օրը Դիմումատուի փաստաբանը վերաքննիչ բողոք բերեց: Իր վերաքննիչ բողոքում նա բողոքում էր, *inter alia*, որ դատավճիռը գլխավորապես հիմնված էր դիմումատուի ինքնագրապարտչական ցուցմունքների վրա, որոնք դատարանը սխալմամբ գնահատել էր որպես «ինքնախոստովանական ցուցմունքներ»: Իրականում, դիմումատուն անալիտիկ լրագրող էր և երբևէ չէր համագործակցել թուրքական գաղտնի ծառայությունների հետ: Նրա մոտ հայտնաբերված նյութերը իր լրագրողական գործունեության արդյունքն էին և վերցված էին մամուլից: Ինչպես հետաքննության մարմինը այնպես էլ դատարանը սխալ էին մեկնաբանել Քրեական օրենսգրքի 60-րդ հոդվածում նշված «այլ տեղեկատվություն» տերմինը, այն կիրառելով վիճարկվող նյութերի նկատմամբ: Նա պնդում էր, հետևաբար, որ մամուլից վերցված յուրաքանչյուր տեղեկատվություն կարող էր համարվել «այլ տեղեկատվություն» որը վնասում էր Հայաստանի ինքնիշխանությանը և տարածքային ամբողջականությանը:

2003 թվականի մարտի 19-ին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանն առանց բավարարման թողեց փաստաբանի բերած վերաքննիչ բողոքը: Ի լրացումն առաջին ատյանի դատարանի եզրահանգումների, վերաքննիչ դատարանը նշեց, որ.

ԲՈՋՈՒՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ
Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից

«[1991 թվականից հետո դիմումատուն] աշխատել է Ազգային ժողովում, Արտաքին գործերի նախարարությունում և Նախագահի աշխատակազմում, նա նաև աշխատել է որպես լրագրող, զբաղվել է առևտրով, բայց իրականում հանդիսացել է հետախուզական կառույցների հետ առնչություն ունեցող գործակալ: Գտնվելով թուրքական հետախուզության տեսադաշտում, 1998 թվականից համագործակցել է նրանց գործակալների հետ, որոնց հիմնական մասը գործել է լրատվական տարբեր գործակալությունների և կազմակերպությունների ծածկի տակ: Նրանց հանձնարարությամբ հավաքել և հաղորդել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների տնտեսական և ներքաղաքական ոլորտներին վերաբերվող տեղեկություններ:

Որոշակի ժամանակահատվածում [դիմումատուն] թուրքական հատուկ ծառայությունների հետ համագործակցությունը կատարել է կապի տարբեր միջոցներով, այդ թվում նամակներով, ֆաքսերով և հեռախոսային խոսակցություններով, սակայն 2000 թվականից փոխել է համագործակցության ձևը և անմիջական կապի մեջ է գտնվել ՄԻԹ-ի Ստամբուլյան հետախուզական կենտրոնի աշխատակիցների այդ թվում [Ն-ի,] ... [Թ-ի և Գ-ի] հետ...: [Դիմումատուն] նրանցից հանձնարարություններ է ստացել և տեղեկություններ հավաքել [Լեռնային Ղարաբաղում] տեղակայված գործերի տեսակների, կառուցվածքի և զենքերի, Մրավի լեռան վրա գործերի առկայության, դրանց տեղակայման մասին, հայ-թուրքական սահմանի պաշտպանական համակարգի, ռադարների առկայության, ռազմական օդանավակայանների գոյության, դրանց տեղի և կառուցվածքի, ռազմական ինքնաթիռների տեսականու և քանակի մասին:

Նա նաև հանձնարարություն էր ստացել պարզելու, կան արդյոք Հայաստանում «Երկիր-Երկիր» տիպի հրթիռներ, տեղեկություններ է հավաքել Իրանական «Սամ-7» տեսակի հրթիռների վերաբերյալ, Հայաստանում կառուցվող ճանապարհների, թունելների, ջրամբարների, հայ-ռուսական համատեղ զորամիավորումների, դրանց կառուցվածքի, տեղակայման, հակաօդային պաշտպանության միավորումների և զինատեսակների վերաբերյալ, հայ-հունական ռազմական համագործակցության մանրամասների, էլեկտրոնային զորամիավորումների առկայության, Հայաստանում Քրդական բանվորական կուսակցության ներկայացուցիչների լիեմլու մասին և այլ հանձնարարություններ ...:

[Դիմումատուն], հանդիսանալով Նախագահի աշխատակազմի աշխատակից, 1998 թվականից կապեր է հաստատել այդ օրերին Հայաստանում գտնվող [Ռ.Օ.Օ-ի հետ], և ուղեկցել է իրեն Հայաստանի տարբեր մարզեր իր այցերի ժամանակ, նրանից հանձնարարություններ ստացել իրեն տեղեկություններ հաղորդելու վերաբերյալ: Լինելով թուրքական հետախուզության վճարովի գործակալ, նա ՄԻԹ-ին է փոխանցել տարաբնույթ լրատվություն տնտեսական և ռազմաքաղաքական վիճակի մասին: [Դիմումատուն] նաև կապի մեջ է եղել ՄԻԹ-ի մի քանի այլ աշխատակիցների հետ ...»:

2003 թվականի մարտի 27-ին դիմումատուի պաշտպանը վճարել է բողոք բերեց: Իր բողոքում, նա պնդում էր, inter alia, որ վիճարկվող բոլոր տեղեկությունները քաղված են մամուլից և

հետևաբար հանրության սեփականությունն են հանդիսանում: Նա նաև պնդում էր, որ դիմումատուի դատապարտումը հիմնված էր նրա ինքնազրպարտչական ցուցմունքների վրա:

2003 թվականի ապրիլի 25-ին ՀՀ վճռաբեկ դատարանը առանց բավարարման թողեց պաշտպանի բերած բողոքը:

Բ. Համապատասխան ներպետական օրենսդրությունը

1. Սահմանադրությունը

24-րդ հոդվածը երաշխավորում է յուրաքանչյուրի խոսքի ազատությունը, ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

42-րդ հոդվածը սահմանում է, որ մարդը պարտավոր չէ ցուցմունք տալ իր դեմ:

44-րդ հոդվածի համաձայն, 24-րդ հոդվածով երաշխավորված ազատությունները կարող են սահմանափակվել օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

2. 1961 թվականի Քրեական օրենսգիրքը (ուժը կորցրել է 2003 թվականի օգոստոսի 1-ին)

59-րդ հոդվածի համաձայն հայրենիքին դավաճանելը արարք է, որը դիտավորյալ կերպով կատարել է Հայաստանի քաղաքացին, ի վնաս Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության, տերիտորիալ անձեռնմխելիության կամ պետական անվտանգության և պաշտպանունակության, այն է՝ թշնամու կողմն անցնելը, լրտեսությունը, օտարերկրյա պետությանը պետական կամ ռազմական գաղտնիք հանձնելը, արտասահման խափչելը կամ արտասահմանից վերադառնալուց հրաժարվելը, օտարերկրյա պետությանը Հայաստանի դեմ թշնամական գործունեություն իրականացնելու մեջ օգնություն ցույց տալը, այլև դավադրությունն իշխանությունը զավթելու նպատակով: Այն պատժվում է մինչև տասնհինգ տարի ազատազրկմամբ գույքի բռնագրավումով:

60-րդ հոդվածի համաձայն, օտարերկրյա պետությանը, օտարերկրյա կազմակերպությանը կամ դրա մասնաճյուղին

ԲՈԶՈՒՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ
Ոչ պաշտոնական թարգանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից

պետական կամ ռազմական գաղտնիք կազմող տեղեկություններ հաղորդելը, այլև հաղորդելու նպատակով դրանք հափշտակելը կամ հավաքելը, ինչպես նաև օտարերկրյա հետախուզության առաջադրանքով այլ տեղեկություններ հաղորդելը կամ հավաքելը՝ դրանք ի վնաս Հայաստանի շահերի օգտագործելու համար, եթե լրտեսությունը կատարված է օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի կողմից պատժվում է յոթից տասնհինգ տարի ժամկետով ազատազրկման, գույքի բռնագրավումով:

ԲՈՂՈՔՆԵՐԸ

1. Դիմումատուն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1, 2-րդ կետերի և 3-րդ կետի (c) կետի հիման վրա բողոքում էր, որ դատաքննությունն արդար չի եղել և որ իրավաբանական օգնություն ստանալու և անմեղության կանխավարկածի իր իրավունքը խախտվել է, քանի որ 2002 թվականի հունվարի 27-ին և 28-ին կատարված իր ինքնագրապարտչական ցուցմունքները հանդիսացել են իր դեմ հիմնական ապացույցը: Այդ ցուցմունքները քննիչները ստացել են ճնշման տակ՝ փաստաբան տրամադրելու հարցում իրեն մոլորեցնելուց հետո: Դատարանի դատավճռի հիմքը կազմում էին այդ ցուցմունքները և մնացած այլ ապացույցները անուղղակի էին: Չնայած հետագայում նա ժխտել է այս ցուցմունքները, ինչպես հետաքննության մարմինը այնպես էլ դատարանները չեն ստուգել այդ ցուցմունքներում պարունակվող փաստերի ճշմարտացիությունը:

2. Դիմումատուն 6-րդ հոդվածի 3-րդ կետի (c) ենթակետի հիման վրա բողոքում էր, որ իր առաջին փաստաբան Բ-ն անարդյունավետ իրավաբանական օգնություն էր տրամադրում և որոշ դեպքերում նույնիսկ համագործակցում էր դատախազության հետ: Նա միշտ տալիս էր ապակողմնորոշող խորհուրդներ, դիմումատուի իրավունքները պաշտպանելու ուղղությամբ ոչ մի գործողություն չէր ձեռնարկում, և նրա միակ նպատակը որքան հնարավոր է շատ փող կորզելն էր:

3. Դիմումատուն Կոնվենցիայի 7-րդ հոդվածի հիման վրա բողոքում էր, որ դատարանում չի ապացուցվել որ թուրք լրագրողները, որոնց հետ նա համագործակցել է սկսած 1998 թվականից, իրականում թուրքական հատուկ ծառայությունների աշխատակիցներ են եղել (O.R.O., N.H., J.B., M.A.B. և S.T.):

Դատարանն այս եզրակահանգումն արել է ԱԱՆ-ի կողմից ներկայացված հուշագրի հիման վրա, որը պատրաստվել էր ռուսական ԱՖԾ-ից ստացված նյութերի հիման վրա և որը չնայած դիմումատուի բազմաթիվ միջնորդությունների, երբևէ չի ներկայացվել դատարանին:

4. Դիմումատուն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի հիման վրա բողոքում էր, որ ինքը Քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածով դատապարտվել է վերլուծական հոդվածներ պատրաստելու և հայկական մամուլից տեղեկություններ հավաքելու համար: Միջամտությունը նախատեսված չէր օրենքով, քանի որ Քրեական օրենսգրքի 60-րդ հոդվածի «այլ տեղեկություն» տերմինը չափից ավելի տարածական է և որոշակի չէ: Բացի դրանից, թուրք լրագրողներին փոխանցված նյութերն ու տեղեկատվությունը չէին պարունակում պետական կամ ռազմական որևէ գաղտնիք: Ամեն դեպքում, դրանք որևէ կերպ չէին կարող վտանգել Հայաստանի ազգային անվտանգությունը: Բոլոր տեղեկությունները վերցված էին հայկական մամուլից և հետևաբար հանդիսանում են հանրության սեփականությունը: Միջամտության համար սուր սոցիալական պահանջ առկա չէր, քանի որ դատախազությունը չէր ապացուցել, որ վիճարկվող նյութերը և տեղեկատվությունը պարունակում էին որևէ պետական գաղտնիք կամ կարող էին վնասել ազգային անվտանգությանը: Վերջապես, միջամտությունը համաչափ չէր, քանի որ ներպետական իշխանությունները չափից ավելի լայն են մեկնաբանել «ի շահ ազգային անվտանգության» հասկացությունը»:

ՕՐԵՆՔԸ

1. Դիմումատուն բողոքում է, որ իր դատապարտումը, գլխավորապես հիմնված փաստաբանի բացակայության պայմաններում, ճնշման տակ տրված իր ինքնախոստովանական ցուցմունքների վրա, և հղում էր կատարում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերի և 3-րդ կետի (c) ենթակետին, որոնց համապատասխան մասերը սահմանում են հետևյալը.

«1. Յուրաքանչյուր ոք, ... նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի ... դատարանի կողմից ... արդարացի ... դատաքննության իրավունք...»

2. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

ԲՈՋՈՒՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ
Ոչ պաշտոնական թարգանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

...

(c). պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով ...»:

Դատարանը վերահաստատում է, որ չնայած լռություն պահպանելու իրավունքը և ինքն իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը Կոնվենցիայի 6-րդ հոդվածով ուղղակիորեն նախատեսված չեն, դրանք համընդհանուր ճանաչում ունեցող միջազգային սկզբունքներ են, որոնք 6-րդ հոդվածի իմաստով հանդիսանում են արդար դատաքննության հասկացության առանցքը: Այս սկզբունքի հիմքում ընկած է, *inter alia*, մեղադրյալի պաշտպանությունը [պետական] իշխանությունների հնարավոր ապօրինի ճնշումներից, այդպիսով նպաստելով դատական սխալների կանխմանն ու 6-րդ հոդվածի նպատակների իրականացմանը: Սեփական անձի դեմ ցուցմունք չտալու իրավունքը մասնավորապես ենթադրում է, որ դատախազությունը քրեական գործերով պետք է ապացուցի մեղքն առանց այնպիսի փաստերի օգտագործման, որոնք, մեղադրյալի կամքին հակառակ, ձեռք են բերվել բռնության կամ ճնշումների գործադրման միջոցով: Այս առումով նշված իրավունքը սերտորեն կապված է 6-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված անմեղության կանխավարկածի հետ (Տե՛ս օրինակ Սաունդերս ընդդեմ Միացյալ Թագավորության գործով (*Saunders v. the United Kingdom*) 1996 թվականի դեկտեմբերի 17-ի վճիռը, Վճիռների և որոշումների Ջեկույց 1996-VI, կետ 68).

Դատարանը նշում է, որ սույն գործով դիմումատուի դատապարտումը գլխավորապես հիմնված էր 2002 թվականի հունվարի 27-ին և 28-ին նրա տված ինքնախոստովանական ցուցմունքների վրա: Այնուամենայնիվ, Դատարանը գտավ, որ այն փաստը, որ դիմումատուի դեմ գլխավոր ապացույցներն իր ինքնախոստովանական ցուցմունքներն էին, ինքնին բավարար չէ 6-րդ հոդվածի խախտում արձանագրելու համար, և այս հարցը պետք է քննվի գործի բոլոր հանգամանքների լույսի ներքո: Մասնավորապես, առաջինը և ամենակարևորը, պետք է պարզվի արդյոք դիմումատուին երբևէ պարտադրվել է տալ ցուցմունքներ, որոնք հետագայում օգտագործվել են նրա դեմ:

ԲՈԶՈՒՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ
Ոչ պաշտոնական բարգանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից

Այս առումով Ղատարանը նշում է, որ դիմումատուն չի ներկայացրել իր նկատմամբ ենթադրյալ բռնություն կիրառելու մասին որևէ ապացույց: Նա ներպետական որևէ իրավասու մարմնի երբևէ չի բողոքել հարցաքննությունների ընթացքում քննիչների կողմից իր նկատմամբ ենթադրյալ հոգեկան ճնշում կամ շանտաժ կիրառելու համար: Նա հարցը չի բարձրացրել նաև ներպետական դատարաններում: Գործի նյութերում չկա ոչինչ, որը կհիմնավորի դիմումատուի պնդումներն այն մասին, որ ինքը պարտադրված է եղել ինքն իր դեմ ցուցմունք տալ, որպեսզի կանխի իր կնոջ և էպիլեպտիկ որդու նկատմամբ հնարավոր ապօրինի գործողությունները: Ավելին, չկա դիմումատուի նկատմամբ ֆիզիկական բռնության կիրառման որևէ ապացույց, և նրա պնդումներն այն մասին, որ ինքը նման բռնության կենթարկվել էր, եթե հրաժարվել խոստովանելուց, հիմնավորված չեն:

Ինչ վերաբերում է հարցաքննությունների ընթացքում փաստաբանի բացակայությանը, Ղատարանը նախ նշում է, որ դիմումատուն նմանապես չի ներկայացրել որևէ ապացույց այն մասին, որ քննիչների կողմից իր նկատմամբ կիրառվել է ճնշում կամ խաբեություն, ստիպելով նրան հրաժարվել փաստաբան ունենալու իր իրավունքից: Նա նաև չի բարձրացրել այս հարցը ներպետական որևէ մարմնում: Ավելին, այս հարցի վերաբերյալ դիմումատուի պնդումները իրարամերժ են: Իր գանգատում նա պնդում էր, որ ինքը փաստաբանից հրաժարվել է խաբեությանը, մինչդեռ հետագա պնդումներում նշում է, որ ինքը հրաժարվել է իրեն առաջարկված փաստաբանի ծառայություններից, քանի որ. «ինքը չի ցանկանում գործ ունենալ ո՛չ պետության կողմից նշանակված և ո՛չ էլ մասնավոր վարձված փաստաբանի հետ, քանի դեռ չի ապահովել իր ընտանիքի անվտանգությունը»: Ներպետական դատարանների առջև դիմումատուն պնդել է, որ նախքան հարցաքննվելը, ինքը հրաժարվել է փաստաբանի ծառայություններից քանի որ. «ինքը ցանկանում իր զերծ մնալ իր գործի հրապարակայնացումից»: Նման պայմաններում, պարզ է դառնում, որ դիմումատուն կամավոր կերպով հրաժարվել է փաստաբան ունենալուց և նրա պնդումները խաբեության մասին հիմնավորված չեն:

Ղատարանը վերջապես գտնում է, որ դիմումատուն Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն ունեցել է ինքն իր դեմ ցուցմունք չտալու իրավունք, և վերը շարադրվածի լույսի ներքո երևում է, որ ոչինչ չէր խոչընդոտում նրան օգտվել իր այդ իրավունքից: Ինչևէ, նա ընտրել է խոսելու և ինքնախոստովանական ցուցմունքներ տալու ճանապարհը: Ավելի, դիմումատուն լրացուցիչ հարցաքննության է ենթարկվել 2002 թվականի փետրվարի 5-ին և

ԲՈԶՈՒՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ
Ոչ պաշտոնական թարգանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից

12-ին իր փաստաբանի ներկայությամբ, և չնայած դրան նա շարունակել է տալ ցումունքներ, որոնք համընկնում և շարունակում էին նախկինում տված իր ցումունքներին: Նման պայմաններում, հաշվի առնելով վերը նշված բոլոր հանգամանքները, Դատարանը եզրակացում է, որ դիմումատուի պնդումներն առ այն, որ 2002 թվականի հունվարի 27-ին և 28-ին ինքնախոստովանական ցուցմունքները ինքը տրել է բռնության ներքո անհիմն և ոչ արժանահավատ են:

Մնում է որոշել, արդյոք դիմումատուի կողմից իր ինքնախոստովանական ցուցմունքների հետագա հերքումը պետք է ազդի դրանց որպես ապացույցների՝ թույլատրելիության վրա: Այս առումով Դատարանը հիշատակում է, որ ապացույցների թույլատրելիությունը գլխավորապես ներպետական օրենսդրության կարգավորման առարկա է և, որպես կանոն, ներպետական դատարաններն են, որ պետք է գնահատեն իրենց ներկայացված ապացույցները: Դատարանի խնդիրն է որոշել արդյոք վիճարկվող վարույթներն որպես ամբողջություն, ներառյալ ապացույցների ձեռք բերման աղբյուրները, եղել են արդար (տե՛ս օրինակ *Ֆերանտելլին և Սանտանջելոն ընդդեմ Իտալիայի գործով (Ferrantelli and Santangelo v. Italy) 1996 թվականի օգոստոսի 7-ի վճիռը, Վճիռների և որոշումների Չեկույց 1996-III, կետ 48*):

Դատարանը գտնում է, որ դիմումատուին փաստաբան ունենալուց հրաժարվելուն հանգեցրած խաբեության կամ դիմումատուի նկատմամբ բռնության կիրառման վերաբերյալ որևէ ապացույցի բացակայության պայմաններում ներպետական դատարանները որևէ կերպ պարտավորված չեն եղել որպես ապացույց չօգտագործել 2002 թվականի հունվարի 27-ին և 28-ին դիմումատուի տված ինքնախոստովանական ցուցմունքները: Հետևաբար, չի կարելի եզրակացնել, որ ներպետական դատարաններն իրենց դատավճիռները կայացնելիս այդ ցուցմունքների վրա հիմնվելով անցել են հայեցողության սահմանները:

Դրանից բխում է, որ գանգատի այս մասն ակնհայտորեն անհիմն է և պետք է մերժվի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն:

2. Դիմումատուն բողոքում էր իր առաջին փաստաբանի կապակցությամբ, հղում կատարելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի (c) ենթակետին:

Դատարանը հիշատակում է, որ պետությունից իրավաբանի մասնագիտության անկախության սկզբունքից բխում է, որ պաշտպանի գործունեությանն առնչվող հարցերը հիմնականում

ԲՈԶՈՒՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ
Ոչ պաշտոնական թարգանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից

պաշտպանյալի և նրա փաստաբանի ներքին խնդիրն է, և այն որ փաստաբանը նշանակվել է անվճար իրավաբանական օգնության շրջանակներում կամ ֆինանսավորվում է մասնավոր կերպով, Կոնվենցիայի իմաստով, բացառությամբ առանձնահատուկ դեպքերի, չի ընկնում պետության պատասխանատվության ներքո (տե՛ս օրինակ Ռուբկովսկին ընդդեմ Լեհաստանի գործով (*Rutkowski v. Poland*) որոշումը, թիվ. 45995/99, ՄԻԵԴ 2001-XI):

Սույն գործով փաստաբան Բ-ն, որը ներկայացնում էր դիմումատուին 2002 թվականի փետրվարի 1-ից մինչև ապրիլի կեսը, մասնավոր իրավաբան էր, ում վարձել էր դիմումատուի կինը առանց պետության կողմից որևէ միջամտության: Դիմումատուի կինն իսկապես Բ-ի ենթադրյալ սխալ վարքագծի վրա հրավիրել է իշխանությունների ուշադրությունը: Այնուամենայնիվ, դիմումատուն է, որ պետք է հրաժարվեր Բ-ից, եթե բավարարված չէ նրա ծառայություններով, և պետությունը չի կարող պատասխանատվություն կրել Բ-ի կողմից իր պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար:

Հետևաբար զանգատի այս մասը *ratione personae* չի համապատասխանում Կոնվենցիայի պահանջներին և պետք է մերժվի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերին համապատասխան:

3. Դիմումատուն բողոքում է, որ ԱԱՆ-ի հուշագիրը դատարանին չի ներկայացվել և հղում է կատարում Կոնվենցիայի 7-րդ հոդվածին: Այնուամենայնիվ, դատարանը գտնում է, որ այս բողոքը առավելապես պատշաճ է դիտարկել վերը հիշատակված Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի ներքո:

Ամեն դեպքում, Դատարանը կրկին նշում է, որ կարող է քննության առնել միայն այն զանգատները, որոնց կապակցությամբ ներպետական պաշտպանության իրավական միջոցները սպառված են (տե՛ս օրինակ Վալաշինասն ընդդեմ Լիտվայի գործով (*Valašinas v. Lithuania*) որոշումը, թիվ. 44558/98, 14 մարտ 2000թ): Սույն գործով դիմումատուն այս հարցը չի բարձրացրել Քրեական [և զինվորական] գործերով վերաքննիչ դատարան և Վճռաբեկ դատարան բերած իր բողոքներում:

Հետևաբար դիմումատուն չի սպառել ներպետական իրավական պաշտպանության միջոցները և զանգատի այս մասն անհրաժեշտ է մերժել՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերի համաձայն:

4. Դիմումատուն պնդում է, որ իր դատապարտումը ապօրինի կերպով միջամտում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով

ԲՈԶՈՒՅԱՆՆ ԸՆԴՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄԸ
Ոչ պաշտոնական թարգանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց»
հասարակական կազմակերպության կողմից

Երաշխավորված իր իրավունքներին: 10-րդ հոդվածի համապատասխան մասը սահմանում է հետևյալը.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից...

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, ...»

Դատարանը գտնում է, որ գործում առկա նյութերի հիման վրա հնարավոր չէ որոշել գանգառի այս մասի ընդունելիության հարցը և հետևաբար Դատարանի Կանոնակարգի 54-րդ Կանոնի 2-րդ կետի (b) ենթակետի համաձայն անհրաժեշտ է այս գանգառի մասին ծանուցել պատասխանող մասնակից պետությանը:

Վերոգրյալից ելնելով Դատարանը միաձայն

Որոշում է հետաձգել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի հիման վրա բերված դիմումատուի գանգառի քննությունը.

Գանգառի մնացած մասը հայտարարում է անընդունելի:

Վինսենթ Բերգեր

Բոշչան Ս. Զուպանչիչ

Քարտուղար

Նախագահ